

նստիլն ու հանգստիլն անշարժ անարզիլն, որպէս զի չըսենք ուրիշ բան:

Գործիս մէջ, խելամուտութեան կանոնին ներածին չափ, պարզուած և ցուցադրուած այդ ճոխ անուններուն և դրուատանուններուն հետ իրենց՝ անոնց տէրերուն՝ ճոխութիւնը, ազդեցութիւնը, ամիրայութիւնն և նահապետութիւնն ալ իբրև բոլորովին անհետացան 1865էն 1869ի վերջերը. ու այդ փառաւոր անցեալէն՝ 1870ին հազիւ հեռաւոր փառքերու և փայլումներու տժգոյն երանգ մը ստուերաբար կը ծածանէր նոր նորիզոնի մը նոր դոյներուն ետեւը, իբրև ցոլացում՝ հսկայ կոհակներուն մեծ ծովի մը, որ ծփացունելէ ետեւ իր վրայ փութորիկներ, խաղաղականներ, ճոխազնացութիւններ ու ոսկետախտ լաստեր՝ կը վարէ իր ուժասպառ հանգարտ և ցածուն ալիքը՝ առնչ, դուսրթ, այլ անձո՛ւկ ծովեզերք մը երեկորնական, շատ մասնատեալ, շատ խօսուն ու մարդախիտ և կարի՛ մանրախնդիր նբրութիւններով ստորաբաժանեալ ու խարսխեալ: